են սպանել: Ասենք, այդպէս... Հիմա, եթէ սրանց հարցնես, թէ ի՞նչ է պատճառը այդ սպանութեան, դրանք կ'ասեն՝ մութ փողոցը, սրածայր դանակը: Իսկ մարդը, նրա հոգեբանութիւնը, ժառանգական ազդակները, սէրը, նախանձը, մի խօսքով, նրա ենթագիտակցութեան տակ ծփող անտեսանելի կեանքը, անտես են անում: Իրենց համար ամէն բան սոսկալիօրէն պարզ է: Միշտ հանգիստ ծովի մէջ են լողում... Երանելի՜ մարդիկ:

Դ–ն երկարօրէն ըմպում է իր կոնեակի բաժակը, ոտքերը երկարում սեղանի տակ եւ մտածում:

Գ–ն բարկացել է: Կանգ առած ինքնաշարժի մեքենան շարունակում է դմբդմբալ: Փրփուրը բերանին պաշտպանում է իր ղեկավարած պետական թատրոնը: Կատակում են, գրգռում են, Գ–ն աւելի է զայրանում: Վ–ի ձեռքին բաժակը սկսում է դողալ: Աղօտ լոյսի տակ դէմքերը կարմիր են եւ փայլուն:

— Հայ լինելը, ընկերներ,— ասում է Զ–ն, — մեծ բեռ է: Հայ լինելը ճակատագիր է: Մըտածեցէք...որտեղից ենք գալիս...մտածեցէք, ի՞նչ սոսկալի ճանապարհ ենք անցել:

Բռունցքը խփում է սեղանին:

— Հայ լինելը,— ասում եմ ես,— դա՛ժ բան է, պայքար է, զոհաբերութիւն է: Մենք ընկերներ ունէինք, մենք բարեկամներ, մայր, հայր, եղբայր ունէինք, ո՞ւր են, ո՞ւր են...

— Ընկեր Զ,— պոռում է մէկը,— Խորհրդային Հայաստանում տխուր երգեր արգիլուած է երգել: Ձեզ կը յանձնենք ժողովրդական դատարանին...

Զ–ն տաքացել եւ յուզուել է:

— Ժողովրդական դատարա՞ն, իսկ պատմութեան դատարանը մոռացե՞լ էք...մոռացե՞լ էք...

Ձայները խառնւում են: Ամենքը պոռում են: Էլ ոչինչ չի հասկացւում:

Սերգէյը սկսել է երգել՝ վատ նշան: Երբ նա սկսում է երգել, ուրեմն կռիւ պիտի լինի:

Պատուհանի եռեւ երկինքը արթնանում է: Լուսաբացի դէմ, Արարատը, հսկայ եւ պայծառ, լուսաւորում է աշխարհը:

Դուրս եմ գալիս: Թարմ օդը դէմքս շոյում է: Գնում եմ, անցնում եմ լուռ փողոցները, ի՜նում դէպի Զանգու:

Գնա՛մ, այդպէս գնամ...

* * *

Լուսաբացին՝ Արարատեան դաշտի բազուկները բարձրանում են դէպի երկինք: Լեռներից վար իջնող, պաղ, համայնատարած մի լռութիւն մեղմօրէն գրկում է ինձ: Օրը առաջանում է, թեւերը կամաց շարժելով, եւ զգոյշ՝ թառում է ժժգոյն բոցերի խարոյկի վրայ:

Ի՞նչ լաւ ապրումի վայրկեան է: Ճակատիս վրայ անհունը եղեամ է դրել: Ինձ մինակ չեմ զգում: Սրտիս տրոփումը անյայտ հեռուներից է գալիս: Մտածումներս՝ դաշտի մակերեսից, լեռների բարձունքներիցն են իջնում: Հոգիս՝ լայն բացել է իր աչքերը, սքանչացած մի անդորրութիւն է: Մարդկանց աւելորդ շարժումները, տների տաճեւ դունաւորումները, պատահական ձայների շեշտը, ամէն մի աւելորդ բան՝ բնութեան այս արթնացող, լուսաւոր ծովի մէջ՝ հերկւում եւ կորչում է:

Հեռւում, Արարատը՝ ալ կրակ ճառագայթների պտտող ճախարակի հետ՝ կարկառում է վսեմ իր դագաթը: Թւում է, հսկայ մի երգեհոնի, բամբ ձայների ալիքներ են մաղբլցում դէպի երկինք,— ու ամէն ինչ, խոր լռութեան մէջ մտիկ է անում:

Գեղամայ լեռները, ոսկէ փողերը երկարած, ամպերին յաղթական քայլերգներ են ասում, մինչ փոքր Մասիսը, ափռում է իր բուրվառի արծաթ կրակը մինչեւ Արագած:

Լա՛ւ է, թաղուել այդպէս վերածնող կենդանութեան մէջ: Լինել պայծառութիւն, անդորր տարածութեան սրտիսն չունչ, եւ նոր ապրումի հրավառ շրթներից ընդունել խորհրդաւոր այս մասունքը:

Մենք ամենքս, պատերը չօշափելով առաջացող կոյրերի նման, փնտռում ենք մեր հոգին:

Քաղաքների դռների առջեւ կանգ ենք առնում մտատանջ: Խայթող ցաւերին՝ դէմ ենք դնում թոյլ մեր կրծքերը: Կեանքը որսում է մեզ, մենք որսում ենք կեանքին: Սակայն, մենք, վշտաբեռ անցորդներս, մանուկների եւ մեծ դաշտանկարների առջեւ, միացնում ենք մեր ձեռքերի ափերը եւ մի քիչ լոյս առնում:

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան